ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2472-Ա « 08 » հուլիսի 2024 թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի և «Վարդան Թովմասյան Շավարշի» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 15.05.2024 թվականին կնքված «ԵՔ–ԳՀԱՇՁԲ-24/73-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 11-րդ փողոցի հ.7 շենքի 2-րդ բնակարանի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:»:

«Վարդան Թովմասյան Շավարշի» Ա/Ձ-ի տնօրեն Վ. Թովմասյանը 21.06.2024 թվականին՝ Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարին ուղղված գրությամբ, հայտնել է, որ չի ցանկանում կատարել 15.05.2024 թվականին կնքված հ. «ԵՔ–ԳՀԱՇՁԲ-24/73-1» ծածկագրով գնման պայմանագրով սահմանված պարտավորու-թյունները:

Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում՝ սույն թվականի հունիսի 28-ին և պայմանագիրը հունիսի 29-ի դրությամբ համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1.«Վարդան Թովմասյան Շավարշի» Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ